ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2022 թվականի N 393-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ, ՏԵՂ, ԳՈՐԻՍ, ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՈՒԺԱԿՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԵՏԵՐԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 04.10.2022 թվականի զեկուցագիրը և Սյունիքի մարզի Կապան, Տեղ, Գորիս, Սիսիան համայնքների ԲՄԿ բուժքույրերի՝ ՀՀ Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզի Կապան, Տեղ, Գորիս, Սիսիան համայնքների մի շարք սահմանամերձ բնակավայրերի բուժմանկաբարձական կետերի համար թվով քսանվեց գեներատոր ձեռք բերելու նպատակով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 8 849 000 (ութ միլիոն ութ հարյուր քառասունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Արտաշես Մարտիրոսյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Արտաշես Մարտիրոսյանին՝ տասնհինգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գեներատորների հատկացման վերաբերյալ:

04.10.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 4
ք. Կապան